

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՌՈՒՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊԻՄԵՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ՝ ԲԱՔՎԻՑ ՌՈՒՍ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊԻՄԵՆ ՊԱՏՐԻԱՐՔ

Մոսկվա

Խոր վշտով տեղեկանում ենք ամեն օր Բաքվից բազմահազար փախստական ընտանիքների մասին ոչ միայն հայ ազգաբնակչությունից, այլ նաև խորհրդային բանակի ընտանիքների անդամների, որոնք ծանր վիճակում ապաստան են գտնում Մոսկվայում:

Մեր խղճի պարտքն ենք համարում տրամադրել երեք հարյուր հազար ռուբլի Ադրբեջանից խորհրդային բանակայինների փախստական ընտանիքներին օգնելու համար:

Հաստատում ենք այս առթիվ Ձերդ Սրբության Մեր հղած 24 հունվարի թվակիր հեռագիրը և ցավակցություն ենք հայտնում և աղոթում Ադրբեջանում զոհված բանակայինների և նրանց ընտանեկան անդամների հոգիների համար: Թող Աստված ողորմությամբ ընդունի նրանց հոգիները և արժանի անի երկնային արքայության հավիտենական կյանքի:

Աղոթում ենք նաև խորհրդային երկրի ներքին խաղաղության ու ազգությունների միջև համերաշխ գոյակցության համար:

Երանի մեր Փրկիչ Հիսուս օգնության հասնի մեզ և «սաստի փոթորիկին և խռոված ջուրերին. հանդարտեցնի և լինի խաղաղություն» (Ղուկ. Ը 24):

Եղբայրական հարգալից սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
30 հունվարի 1990 թ.